



# ԸՀՄ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
2013 թ. թիվ 18

## ԸՀՄ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ՆԻՍՏՈՒՄ

2013 թվականի հունիսի 7-ին ՀԱՄԿ-ի նիստերի դահլիճում կայացավ Հայաստանի պետիկմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահության ընդլայնված նիստ: Նիստին մասնակցում էին նաև ԸՀՄ պաշտոնաթող նախագահ Ե. Հակոբովան, ՀԱՄԿ-ի նախագահ Է. Թումայանը, արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Ս. Ղարախանյանը, ԸՀՄ նախագահության պատվավոր անդամ Կ. Խանգելյանը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Դ. Շահինյանը, ԸՀՄ խորհրդի անդամներ:

❖ Առանցքային հարցերից էր հանրապետությունում գազի և էլեկտրաէներգիայի գների թանկացումը, որը քննարկելուց հետո նախագահությունը որոշեց նշված հարցով բաց նամակ հղել ՀՀ նախագահին, ՀՀ Ազգային ժողովի նախագահին և ՀՀ վարչապետին (նամակի բովանդակությունը կներկայացվի տեղեկագրի սույն համարում): (Նամակը տպագրվել է “Ազգ” օրաթերթի հունիսի 13-ի համարի առաջին էջում և էլեկտրոնային տարբերակում, ինչպես նաև պետիկմնարկների արհմիության ֆեյսբուքյան էջում): Նշենք, որ վերը նշված խնդրով հայտարարությամբ հանդես է եկել նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան (տես [www.hamk.am](http://www.hamk.am)):

❖ Նիստի մասնակիցները ամփոփեցին նաև այս տարվա մայիսից երթի արդյունքները. ԸՀՄ նախագահի գրավոր շնորհակալագրերով խրախուսվեցին երթին առավել ակտիվ մասնակցած 18 անդամ կազմակերպությունների նախագահներ՝ «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ՀՀ Ոստիկանության ոչ ծառայողների, «Սպասարկում» ՊՈԱԿ-ի, Հայաստանի պատմության թանգարանի, «Զատիկ» մանկատան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ ԿԱ ՊԳԿՎ-ի, ՀՀ ԲՄՓ գործակալության, Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների և Նոյեմբերյանի, Իջևանի, Գավառի, Սևանի, Հրազդանի, Աշտարակի ու Մասիսի տարածքային միությունների նախագահները:

Ճյուղային միության նախագահը շնորհակալություն հայտնեց նաև Արագածի, Էջմիածնի, Արտաշատի, Դիլիջանի տարածքային միությունների, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահներին երթին մասնակցություն ցուցաբերելու համար և բոլորին հորդորեց այսուհետ առավել ակտիվություն ցուցաբերել նմանատիպ միջոցառումներին:

❖ ԸՀՄ պաշտոնաթող նախագահ Ե. Հակոբովային հանձնվեց Արհմիությունների միջազգային ֆեդերացիայի պատվոգիրը՝ **“Երկարամյա, ակտիվ և արդյունավետ աշխատանքի, տարբեր երկրների արհմիութենական համերաշխության և բարեկամության ամրապնդման գործում անձնական ներդրման համար”**:

❖ ՀԱՄԿ-ի նախագահ Է. Թումայանը արհմիութենական ակտիվ աշխատանքի համար շնորհակալություն հայտնեց ԸՀՄ լիդերներին՝ միաժամանակ տեղեկացնելով, որ ՀԱՄԿ-ի միջնորդությամբ ԸՀՄ նախագահ Ե. Հակոբովան արհմիութենական մեծ ներդրման համար պարգևատրվել է նաև Արհմիությունների համընդհանուր համադաշնության բարձրագույն պարգևով՝ արծաթե մեդալով:

Շնորհավորում ենք տիկին Հակոբովային բարձր գնահատանքների ու արժանի պարգևների համար. մաղթում ենք նրան անհոգ, խաղաղ, անխոչընդոտ կյանք...

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ**

Օրերս ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվեց ճյուղային հանրապետական միության «ՊՐՈՖՏՈՒՐ» ՍՊԸ-ն, որը զբոսաշրջային տարատեսակ ծառայություններ է մատուցելու հանրապետությունում և արտերկրում: «ՊՐՈՖՏՈՒՐ»-ն արհմիության անդամներին և բոլորին առաջարկում է համատեղ սկսել ամառային թեժ սեզոնին հանգստի կազմակերպումը: Խորհրդատվություն կարող էք ստանալ 58.05.82 հեռախոսահամարով կամ այցելելով ճյուղային արհմիության գրասենյակ:

***ԹԱՆԿԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՄԵՂՄԵԼՈՒ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ***

*Իր գործունեության առանցքը համարելով աշխատավոր մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների ու շահերի պաշտպանությունն ու ամրապնդումը՝ պետհիմնարկների հանրապետական արհմիությունը մշտապես հետամուտ և պատրաստակամ է աշխատողների սոցիալական խնդիրները բարձրաձայնելուն: Այս անգամ էլ ՃՀՄ նախագահությունը քննարկեց գազի և էլեկտրաէներգիայի գների թանկացումը և որոշեց նշված հարցով համակարգի շուրջ 16000 արհմիության անդամների անունից բաց նամակով հանդես գալ Հայաստանի Հանրապետության իշխանությունների առջև: Ստորև ներկայացնում ենք նշված նամակը և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի պատասխան գրությունը.*

**Բ Ա Ց Ն Ա Մ Ա Կ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախագահ  
պարոն Սերժ Սարգսյանին  
Հայաստանի Հանրապետության  
Ազգային ժողովի նախագահ  
պարոն Հովիկ Աբրահամյանին  
Հայաստանի Հանրապետության վարչապետ  
պարոն Տիգրան Սարգսյանին

Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը իր մտահոգությունն է հայտնում գազի և էլեկտրաէներգիայի գների բարձրացման կապակցությամբ:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում աշխատողները, նույնիսկ միջինին մոտ աշխատավարձ ստացողները, գազի և էլեկտրաէներգիայի գների բարձրացման արդյունքում ստիպված կլինեն աշխատավարձի մեծ մասը վճարել կոմունալ ծախսերի համար: Եթե հաշվի առնենք, որ գազի և էլեկտրաէներգիայի գների բարձրացման հետ փոխկապակցված անխուսափելի է նաև որոշ սպառողական ապրանքների, ծառայությունների և սննդամթերքի թանկացումը, ապա հասարակության լայն շերտեր կհայտնվեն աղքատության շեմին:

Գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները՝ մեղմելու այդ թանկացումների հետևանքը բնակչության համար: Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է իրեն պաշտպանված զգա իր իսկ երկրում, այլապես այս ամենը կբերի անկանխատեսելի հետևանքների:

## Հարգելի տիկին Ասատրյան

Ձեր 10.06.2013թ. N 48-01 գրությամբ ներկայացված բաց նամակի կապակցությամբ հայտնում ենք, որ բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման և դրա արդյունքում հնարավոր գնաճի բացասական ազդեցությունները ցածր եկամուտ ունեցող բնակչության վրա նվազեցնելու նպատակով ՀՀ կառավարությունը նախաձեռնել է 2013թ. հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործող նվազագույն ամսական աշխատավարձը բարձրացնել 30 %-ով և սահմանել 45000 դրամ: Նվազագույն աշխատավարձի պլանավորված բարձրացումը 2013թ. հուլիսի 1-ից զգալի օգնություն կլինի նվազագույն աշխատավարձ ստացողներին: 2014թ. հունվարի 1-ից կսկսվեն պետական համակարգի աշխատավարձերի վերանայումները:

Միաժամանակ ՀՀ կառավարությունը շարունակելու է նաև սոցիալապես անապահով ընտանիքների սպառած բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցման ծրագիրը:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԱՐՄԵՆ ՄՈՎՄԻՍՅԱՆ

## Ա Ն Ց Ո Ւ Դ Ա Ր Ձ

Ուրախ ենք տեղեկացնել, որ Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունն այսուհետ կունենա սեփական ինտերնետային էջը՝ [www.arhmiutyun.org](http://www.arhmiutyun.org):



ՀՀ կառավարության աշխատակազմի “Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն” ծրագրերի իրականացման գրասենյակի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից մայիսի 31-հունիսի 12-ը ՀՀ 5 մարզերում (Տավուշ, Շիրակ, Վայոց ձոր, Սյունիք, Լոռի) կազմակերպված “Կարգավորիչ գիյոտին ծրագիրը Հայաստանում” քննարկում-խորհրդակցություններին մեր անդամ կազմակերպություններից մասնակցեց 18 ներկայացուցիչ:



Ս.թ. ապրիլի 24-ին և մայիսի 9-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և ճյուղային միությունների աշխատակազմերի աշխատակիցները հարգանքի տուրք մատուցեցին ցեղասպանության և Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին:



Մայիսի 1-ին ՀԱՄԿ-ի և ճյուղային միությունների հետ համատեղ կազմակերպված խաղաղ երթից հետո, որը լուսաբանեցին մի շարք լրատվամիջոցներ, մեր համակարգի մասնակիցները “Մոսկվա” կինոթատրոնում դիտեցին “ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ” ֆիլմը:



Ընթացիկ տարվա մայիսի 22-ին Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաք Ալմաթայում կայացավ Արհմիությունների միջազգային ֆեդերացիայի (ԱՄՖ) խորհրդի հերթական նիստը, որին առաջին անգամ մասնակցեց ՃՀՄ նախագահ Ա. Ասատրյանը: Օրակարգային հարցերի շրջանակում՝

- Ե. Հակոբովայի փոխարեն ԱՄՖ խորհրդի անդամ համարվեց Ա. Ասատրյանը
- Ամփոփվեցին արհմիության անդամների թվաքանակի ավելացման համար անցկացված մրցույթի արդյունքները. այս առումով լավագույն անդամ կազմակերպություն ճանաչվեց և պարգևատրվեց Տաջիկստանի պետիմնարկների, բանկերի և հասարակական սպասարկման աշխատողների հանրապետական արհմիությունը (Հայաստանը արհմիության անդամների թվաքանակի ավելացմամբ 2-րդ տեղում էր), արհմիության անդամների թվաքանակի ավելացման համար դրական գնահատականի արժանացան Հայաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի և Ղրղզստանի արհմիությունները
- Լսվեցին Տաջիկստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Բելառուսի, Ռուսաստանի, Հայաստանի պետիմնարկների արհմիութենական խնդիրները: Ա. Ասատրյանն իր հերթին ներկայացրեց մեր արհմիութենական խնդիրները, նրա առաջարկով հանձնարարվեց ԱՄՖ նախագահին Հայաստանի Հանրապետության քաղաղացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացման հարցով Արհմիությունների միջազգային ֆեդերացիայի անունից դիմել ՀՀ նախագահին

➤ Լսվեց, ի գիտություն ընդունվեց և ԱՄՖ անդամ կազմակերպություններին առաջարկվեց օգտագործել Ղազախստանի գործադիր իշխանության, գործատուների և արհմիության միջև պայմանագրերի կնքման փորձը՝ աշխատողների աշխատանքային պայմանների ու երաշխիքների ապահովման ուղղությամբ և այլն:



Սույն թվականի հունվարի 1-ից Արհմիությունների միջազգային ֆեդերացիան համալրվեց նոր կազմակերպությամբ՝ Իսրայելի պետական ծառայողների արհմիությամբ, իսկ նախագահը դարձավ ԱՄՖ խորհրդի անդամ: Տեղեկացնենք, որ արհմիությունն ունի շուրջ 80000 արհմիության անդամ, գործում է Իսրայելի Աշխատանքի Համընդհանուր Ֆեդերացիայի կազմում, արհմիության նախագահը միաժամանակ ղեկավարն է որոշ կազմակերպությունների (հիմնարկներ, սոցիալացիաներ, ֆոնդ, ակումբ), որոնք իրենց հերթին հանդիսանում են արհմիության անդամ կազմակերպություններ:



Ս.թ. ապրիլին ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրում գրանցվեց Երևանի պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունը, որը կոչված է ներկայացնելու և պաշտպանելու մայրաքաղաքի պետական հիմնարկներում և հասարակական սպասարկման ոլորտում աշխատողների աշխատանքային, սոցիալ-տնտեսական իրավունքներն ու շահերը, համախմբելու նրանց ջանքերը աշխատանքային, սոցիալ-տնտեսական երաշխիքների պահպանման և ամրապնդման ուղղությամբ:

Շնորհավորում ենք կազմակերպության նորընտիր նախագահ Է. Մելքունյանին և մաղթում ակտիվ, անխոչընդոտ արհմիութենական աշխատանք:

Նորաստեղծ արհեստակցական կազմակերպությունը համագործակցության է հրավիրում վերոնշյալ ոլորտների աշխատողներին: Կազմակերպությանն անդամակցելու պայմաններին և այլ մանրամասներին կարող եք տեղեկանալ 010.56.04.14 հեռախոսահամարով կամ այցելելով Վ. Սարգսյան 26/3, 5-րդ հարկ, 502 սենյակ:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բելառուսի արհմիությունների ֆեդերացիան հանրապետության կառավարությունից և գործատուներից պահանջում է աշխատողների աշխատանքային արտոնյալ պայմանների ստեղծում, քանզի յուրաքանչյուր աշխատող ունի անվտանգ աշխատանքի, աշխատանքային լավ պայմանների, անհատական անվտանգության պաշտպանության միջոցներով ապահովված լինելու և տաք սնունդի իրավունք: Միաժամանակ ֆեդերացիան առաջարկում է տարվա ընթացքում կազմակերպել վնասակար պայմաններում աշխատողի 14-օրյա առողջարանային բուժումը գործատուի միջոցներով՝ մասնագիտական հիվանդություններից հնարավորինս զերծ մնալու համար:



Ուկրաինայում ընդունվել է օրենք՝ «Արտադրական միջավայրի, աշխատանքի անվտանգության, հիգիենայի իրավիճակի բարելավման 2014-2018թթ. համապետական սոցիալական ծրագրի մասին», որը կարևորագույն արդյունքներից է կառավարության, արհմիությունների և գործատուների՝ աշխատանքի պաշտպանության ոլորտում վերջին մի քանի տարվա համագործակցության: Ծրագիրն ընդգրկում է նշված ոլորտում արհմիությունների առաջարկությունների զգալի մասը:



Ուկրաինայի Գերագույն Ռադայի քննարկմանն է ներկայացվել Աշխատանքային նոր օրենսգրքի նախագիծ, որում ներառված են Ուկրաինայի արհմիությունների ֆեդերացիայի առաջարկությունները: Արհմիությունը մտադիր է մինչև վերջ պայքարել աշխատանքային իրավունքներին ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվող առաջարկներն օրենսգրքում ամրագրելու համար:



Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունել է Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների՝ արհմիությունների հետ համատեղ մշակված նախագիծ, ըստ որի արգելվում է աշխատողին առանց հիմնավորման ազատել աշխատանքից: Բացի նշվածից, նախատեսվում է նաև աշխատողին վարձատրել արտաժամյա աշխատանքի և հանգստյան օրերին աշխատանքի ներգրավելու դեպքում, ինչը բացակայում է գործող օրենսգրքում: Չնայած օրենսգրքի շուրջ ընթացող քննադատություններին՝ հանրապետության արհմիության ղեկավարի կարծիքով նախագծում հաշվի են առնվել և՛ աշխատողի, և՛ գործատուի շահերը:



Սուլդովայի Արհմիությունների ազգային կոնֆեդերացիայի և Կառավարության բանակցությունների արդյունքում ընթացիկ տարվա մայիսի 1-ից նվազագույն աշխատավարձը դարձավ 1400 լեյ (շուրջ 114 ԱՄՆ դոլար), ինչը 100 լեյով ավել է նախորդ տարվա համեմատ: Կոնֆեդերացիայի ղեկավարի տեղակալի խոսքերով՝ «արհմիությունները դժգոհ են աշխատավարձերի այդքան աննկատ ավելացումից և պատրաստվում են այդ

հարցին մոտ ժամանակներում անդրադառնալ ու հասնել տնտեսության իրական հատվածում նվազագույն աշխատավարձի մինչև 1600 լեյ բարձրացմանը”: